

ՄԱՍՆԱԿՅՈՒԹԵԱՄԲ Զ. Յ. Դ. ՋՈՄԻ ԵՒ ԼԵՄԻ

ՊԱՂԵՍԻԵԱՆ ԻՆԹԻՑԱՏԱՅԻ ԶՕՐԱԿՅՈՒԹԵԱՆ ՅՈՅՑ

Պէջրուծի մէջ կայանալիք արարական վեհաժողովի նախօրեակին եւ պաղեստինցի ժողովուրդի իրաւունքներուն զօրալիք կանգնելու նպատակով, երէկ յետմիջօրէի ժամը 12:30էն 4:00 տեղի ունեցաւ պաղեստինեան ինքիֆատայի զօրակցութեան ցոյց՝ կազմակերպութեամբ լիբանանեան եւ պաղեստինեան կուսակցութիւններու երիտասարդական - ուսանողական միաժողովներուն: Յոյցին մասնակցեցան նաեւ Հ. Յ. Դ. ՋՈՄԻ եւ ԼԵՄԻ անդամներ:

Նահատակաց հրապարակէն թանգարան ուղղուած բազմազան ցուցարարներու երթը կանգ առաւ Արաբական Երկիրներու Լիկայի արար արդարադատութեան նախարարներու խորհուրդի կեդրոնին դիմաց, ուր ցուցարարները հրկիզեցին ամերիկեան եւ իսրայէլեան դրօշակներ:

Այնուհետեւ կարդացուցաւ արարական վեհաժողովին ուղղուած յուշագիր մը, որուն մէջ կը շեշտուէր ինքիֆատայի շարունակելու անհրաժեշտութիւնը եւ վեհաժողովի մասնակիցներուն կողմէն կ'ուղղուէր արհաւիրական ժողովուրդի պայքարին: Յուշագիրը յանձնուցաւ կեդրոնի պատասխանատուներուն:

ԱՐԱԲԱԿԱՆ ԿԵՀԱԺՈՂՈՎԻ ՕՐԵՐՈՒՆ՝ ԵՐԹԵԻԵԿԻ ՅԱՏՈՒԿ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Բանակի հրամանատարութիւնը երէկ յայտարարեց, որ Պէջրուծի մէջ գումարուելիք արարական վեհաժողովի ապահովութեան գոտի ճշդած է սկսելով Աճմէտ Տաուք փողոցէն (հիւսիս) եւ անցնելով ծովային մայրուղիէն մինչեւ Պէյ Վիու պանդոկ, Իպն Սիւն փողոց, Ֆէնիսիա փողոց, Ֆէնիսիա պանդոկի փողոց, Քախրէտտի փողոց, Բլէմանսոյի քառուղի, Սթարք, Քուրէյ Ետք շրջանը կ'ամբողջանայ վերադառնալով Օմար Տաուք փողոց:

Բանակի հրամանատարութիւնը ըսաւ, որ ապահովութեան գոտին ինքնաշարժներու եւ հետիոտն անցորդներու առջեւ փակ պիտի ըլլայ 25/3/2002ի կէս գիշերէն մինչեւ ժողովի աւարտը՝ 28/3/2002: Այս ժամանակամիջոցին կ'արգիւրդի ինքնաշարժ շարել յիշեալ շրջանէն ներս:

ՄԱՀԱԶԴ

Տիար Յակոբ Դաւիթեան
Տիար Ռուբէն Դաւիթեան եւ զաւակները՝ Մարալ եւ Հուրի
Տէր եւ տիկին Միսաք Դաւիթեան եւ զաւակը՝ Ռուբէն
Տէր եւ տիկին Կարպիս Դաւիթեան եւ զաւակները՝ Կարինէ, Ժիրարք եւ Ռազմիկ
Միսեան ընտանիք
Պոյաճեան ընտանիք
Կէօքճեան ընտանիք
Կէօքճեան ընտանիք
Թաշճեան ընտանիք
Պարիթեան ընտանիք
Եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց քրոջ, հօրաքրոջ եւ հարազատին:

ԹԱԳՈՒՆԻ ԴԱԻԹԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 20 Մարտ 2002ին, առաւօտեան ժամը 8:00ին:

Յուզարկաւորութեան արարողութիւնը տեղի ունեցաւ Չորեքշաբթի, 20 Մարտ 2002, կէսօրէի ետք ժամը 4:00ին, Ս. Յովհաննու Կարապետ եկեղեցոյ մէջ, Հայաչէն, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուցաւ Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

● Ներկայ ընդունիլ իբրեւ մահազգ:
● Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Էլբէֆիէ, «Վիքթոր Հիլս» փողոց, «Տոքթ. Անի Մալուլի» շէնք, Երկրորդ յարկ, Հինգշաբթի 21, Ուրբաթ 22 եւ Շաբաթ 23 Մարտին:

ՄԱՀԱԶԴ

Տիկին Ալիս Զարդարեան եւ զաւակները՝ Բաֆֆի եւ Սօսի

Տէր եւ տիկին Հանրի եւ Անի Հապրա եւ զաւակուներ
Տէր եւ տիկին Էմիլ եւ Սալբի Մամարի
Տէր եւ տիկին Փանոս եւ Սիլվա Պիլերբիլեան եւ զաւակուներ

Տէր եւ տիկին Աւետիս եւ Նորա Չուլֆայեան
Տէր եւ տիկին Յովհաննէս Զարդարեան եւ զաւակուներ
Պրն. Մարգար Զարդարեան
Տէր եւ տիկին Մովսէս Թիւֆէնքեան եւ զաւակուներ

Եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց զաւակին, եղբոր եւ հարազատին:

ՆԵՐՍԷՍ ԶԱՐԴԱՐԵԱՆԻ (Ծնեալ՝ 1962ին)

անակնկալ մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 19 Մարտ 2002, Երեկոյան ժամը 7:00ին:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Հինգշաբթի, 21 Մարտ 2002, կէսօրէի ետք ժամը 3:00ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Ֆրն. Շրպէլքի Ազգային գերեզմանատունը:

● Ներկայ ընդունիլ իբրեւ մահազգ:
● Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին քրոջ տէր եւ տիկին Էմիլ եւ Սալբի Մամարի բնակարանը, Քըրքըք Շըհուան, Պայատա, Ապու Մամար շէնք, 2րդ յարկ, Ուրբաթ 22 եւ Շաբաթ 23 Մարտ 2002ին:
● Կը խնդրուի փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւններ կատարել ՔԱՀԼԻ Ծերակոնցի:

ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐԸ ԿԸ ԳՏՆՈՒԻ ՃԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ ԱՆԿԻՒՆԱԴԱՐՁԻ ԴԻՄԱՅ

Կ'ԸՍԵ ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ

Հանրապետութեան նախագահ զօր. Էմիլ Լահուտ քուէյթեան լրատու գործակալութեան տրուած հարցազրույցի մէջ նկատելի տուաւ, որ արաբական աշխարհը կը գտնուի ճակատագրական անկունագրով մը դիմաց եւ այս զգալուն հանգրուանին անհրաժեշտ է, որ բոլորս միասին ճիշդ ընենք օգտագործելու ներկայացած առիթը, միասնաբար դժուրներու բոլորին թշնամիին:

Պէջրուծի վեհաժողովին արար ղեկավարներ կողմէն են վերահաստատուելու Մատրիտի ժողովին բխած մեր համաձայնութիւնը՝ կառուած մնալու միջազգային որոշումներուն, խաղաղութեան փոխարէն հող տարագրին,

պաղեստինցի զաղթականներու տուեղարմի իրաւունքին, ըսաւ ան:

Նախագահ Լահուտ ողջունեց արդար, ամբողջական եւ վերջնական խաղաղութեան հաստատումին համար Մէլուտական Արաբիոյ ի գործ դրած ճիգերը:

Միջին Արեւելքի մէջ խաղաղութեան հաստատումին ի խնդիր Ապտալա իշխանի նախաձեռնութեան մասին նախագահ Լահուտ ըսաւ, որ սէնտցիներուն հետ զայն քննարկելէ առաջ պիտի սպասէ անոր բերեղացուն մին եւ մանրամասնութիւններու յստակացումին:

Ամօթալի է որ արաբական երկիրներուն միջեւ մնան Գուէյթի եւ Իրաքի

նման պարագաներ, իսկ Լիբանան պատրաստ է ոչ միայն առաջարկներ ներկայացնելու, այլեւ դիմելու նման միջարարական հարցերը կանխարդիւոյ որեւէ միջոցառումի, ըսաւ ան:

Նախագահ Լահուտ երէկ վարչապետ Ռաֆիք Հարիրիի հետ քննարկեց վերջինին Ռուժանիա տուած այցելութեան արգիւնները, ինչպէս նաեւ արաբական վեհաժողովին գծով հաղորդակցուած ընդհանուր դատարար Ատուէ մը, պետութեան անվտանգութեան ուժերու ընդհանուր տնօրէն զօր. Էտուար Մանսուրը եւ նախկին նախարար Ֆուատ Պուլթրոսը:

ՄԵԾԱՐԱՆՔԻ ԵՐԵԿՈՅ ՆՈՒԻՐՈՒԱԾ...

Շարունակուած Ա. Էջէն

Նուրիճան Տեմիրճեան, Երեսփոխան Միխայիլ Տահրէ, Պուրճ Համուտի քաղաքապետ Անդրանիկ Մարրեան, լիբանանահայ կառույցներու եւ միութիւններու պատկան ներկայացուցիչներ, մեծ թիւով հայ եւ օտար արւեստագէտներ եւ արւեստասէրներ:

Հայերէն եւ արաբերէն լեզուներով բացման խօսքը կատարեց Ճորճ Աբէլեան, որ ներկայացուց արուեստագէտին կեանքը եւ գործը: «60ամեակի մը ընթացքին Վարուժան Մէլթեան արհեստ ու արուեստը միացուցած՝ երկնեց լուսանկարներ: Այսօր եկած ենք այդ հսկայ վաստակը գնահատելու», ըսաւ ան:

«Լուսանկարչութեան բանաստեղծ» Վ. Մէլթեանի մասին հայերէն լեզուով իր սրտի խօսքը ուղղեց Յակոբ Կիւրոյեան: Ան ներկայացուց հայ յիշատակումի միջոցով կեանքին մէջ մեծարեալին ունեցած ներդրումը եւ անոր գործին աւանդը:

«Վ. Մէլթեան հայ կեանքին շարունակ է իր լուսանկարչական գործիքով», շեշտեց ան եւ աւելցուց. «Վարուժան արւեստագէտ լուսանկարիչ է զգալու, նկարելու ու զգացնելու արժանիքներով: Իր վաստակով կը հպարտանայ Լիբանանը, լիբանանահայրութիւնը, հայ ժողովուրդը»:

Ապա յաջորդաբար գնահատանքի եւ մեծարանքի խօսքերով հանդէս եկան Արաբական Լուսանկարչութեան Միութեան նախագահ Աբրամ Զաաթարի (անգլերէնով), լիբանանցի բանաստեղծ Հանրի Չղէյպ եւ նշանաւոր բանաստեղծ Միխայիլ Նայիմէի եղբորորդին՝ Նետիմ Նայիմէ, որուն ընտանիքին տարիներու մտերմութեւ եղած է մեծարեալը:

Իր խօսքին մէջ Ա. Զաաթարի ըսաւ, որ Վ. Մէլթեան եղած է արաբական աշխարհի այն սակաւաթիւ լուսանկարիչներէն, որուն արուեստանոցը չէ սահմանափակուած չորս պատերու մէջ, այլ եղած է ամբողջ Լիբանանը:

Հ. Չղէյպ շեշտը դրաւ արուեստագէտին միաժամանակ թէ՛ հայէս լիբանանցի եւ թէ՛ խորապէս հայու զգացողութեան վրայ: «Վ. Մէլթեան եղած է այն արուեստագէտը, որ յաջողած է թա-

փանցել մարդոց խորքը եւ դիմանկարներու ընդմէջէն բացայայտել անոնց հոգին», ըսաւ ան:

Ն. Նայիմէ յայտնեց, որ Վ. Մէլթեանի ուսանակելի շնորհի յաւիտեան կ'ապրին Լիբանանի բնութեան ու քաղաքներուն այն անկիւնները, որոնց վրայ ժամանակը արգէն իսկ զործած է իր աւերը:

Հանդիսութեան ընթացքին Համազգայինի կեդրոնական Վարչութեան ատենապետը Վ. Մէլթեանը պարգևատրեց «Համազգայինի Կեդրոնական Վարչութեան Շքանշան»ով, որ կը շնորհուի հայ մշակութի մշակներուն:

Արամ Ա. կաթողիկոս արտասանեց իր հայրապետական խօսքը, ուր նշեց, որ Վ. Մէլթեան իր արուեստով, գործով եւ ծառայութեամբ արժանի է իրեն հանդէպ եղած մե-

ծարանքին: «Ան յաջողած է իր լուսանկարներով որսալ Լիբանանի ոգին, շօշափելի դարձնել անտեսանելին եւ անսահմանը: Անոր լուսանկարները սոսկ յարգելիք տուր չեղան լիբանանեան հայրենիքին, այլ եղան անոր գեղեցկութեան, արժէքին ու անժամանցելիութեան գրաւականը», ըսաւ Արամ Ա.:

Ապա վեհափառը Վ. Մէլթեանը պարգևատրեց «Ս. Մեսրոպ Մաշտոց»ի շքանշանով:

Հանդիսութեան աւարտին յանուն մեծարեալին շնորհակալութեան եւ երախտագիտութեան խօսք առաւ Եւս Տերվիշեան:

Գործադրուեցաւ գեղարուեստական կոկիկ ելուարտը, ուր հանդէս եկան Միլվարդ Պոյաճեան, Գայիանէ Ներսէսեան (ղաշաղկ) եւ Կարինէ Շահինեան (երգ):

ԱՌԱՋՆՈՐԳ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԸ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՉ

Կիրակի, 24 Մարտ 2002ին, Ծաղկազարդի տօնին առիթով, Նոր Ատանայի Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ պիտի պատարագ, քարոզ եւ քափորին նախագահ թեմիս առաջնորդ՝

ԳԵՐՃ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱԶԵՐԱՆ

Սկիզբ ժամերգութեան՝ ժամը 7:30
Սկիզբ Ս. պատարագի՝ ժամը 9:30
Թափօր՝ ժամը 11:00

Նոյն օրը կ'եսորէ ետք ժամը 4:00ին տեղի պիտի ունենան ռոքֆօքի արարողութիւնը: Սիրով կը հրաւիրուի հաւատացեալ ժողովուրդը այս արարողութեան եւ լսելու սրբազան հօր պատգամը:

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՐԴ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ՏՕՆԸ ԺՈՒՆԻԵԻ Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՉ

Ծաղկազարդի տօնը, որ կը բնորոշէ Քրիստոսի Յաղթական Սուտը Երուսաղէմ, արժանի շուրջ պիտի տօնախմբուի ժուլիէի Ս. Յարութիւն եկեղեցոյ մէջ Կիրակի, 24 Մարտ 2002ին: Պիտի պատարագ եւ պատգամ՝

ԳԵՐ. ՆԱՐԵԿ Ծ. ՎՐԴ. ԱԼԵՍԵՂՅԱՆ

Սկիզբ ժամերգութեան՝ ժամը 8:00
Ս. պատարագ՝ ժամը 10:00
Քարոզ՝ ժամը 11:00
Թափօր՝ ժամը 11:30
Դոմբաղէ՝ կ'եսորէ ետք ժամը 4:00

Սիրով կը հրաւիրենք շրջանիս հաւատացեալ ժողովուրդը ներկայ գտնուելու սոյն հոգեպարար արարողութեան:

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՐԴ ԺՈՒՆԻԵՆ ԱՆԹԻՒՆԱՍԻ ԶԱԼԱՅԻ ԵՒ ԶՐԱՎԱՅԻՑ

ԵՐԵՍՓՈՒՆԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆՑ ԳԾՈՎ ՆԱԽԱՐԱՐ ԱՅՐԱՄ ԿՈՉ ԿՈՒՂՂԵ ՈՐԴԵԳՐԵԼ ՆՈՐ ՕՐԵՆՔ ՄԸ

Ճարտարարուեստի նախարար Ժորժ Աֆրամ երէկ կոչ ուղղեց որդեգրելու Երեսփոխանական ընտրութեանց նոր եւ արդար օրէնք մը, որ հաւասար վերաբերմունք կ'ունենայ բոլոր շրջաններուն եւ հաստատուներուն հանդէպ:

Ան ըսաւ, որ Լիբանանի մէջ չեն յարգուել սահմանարկութեան եւ «ազգային ուխտ»ի ոգին: Աֆրամ նաեւ քննադատեց տնտեսական տագնապը լուծելու ամբողջական եւ յստակ ծրագիր կազմելու փոխարէն՝ մասնակի լուծումներու դիմած կառավարութիւնը:

ՍԷՈՒՏԱԿԱՆ ԱՐԱՔԻՈՅ ԵՒ ՅՈՐԴԱՆԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ...

Շարունակուած Ա. Էջէն

Յորդանանի արտաքին գործոց նախարարը նախագահ Լահուտի փոխանցեց Յորդանանի Ապտալա Բ. թագաւորէն նամակ մը, ապա յայտարարեց, որ վեհաժողովը կարեւոր որոշումներ պիտի տայ պաղեստինեան դատին եւ Իրաքի թղթածրարին նման հարցերու մասին:

Ան յայտնեց, որ նախագահ Լահուտի հետ մանրամասնօրէն քննարկած է սէնտական նախաձեռնութիւնը, եւ անոր հետ համաձայն գտնուած է, որ այս առաջարկը յստակօրէն պէտք է ընդգրկէ արաբական իրաւունքները, հողի ազատագրումը, գաղթականներու տունդարձը եւ պաղեստինեան պետականութեան կերտումը:

Մուաշար հաւաստեց, որ վեհաժողովը ինքիֆատային զօրակցութիւն յայտնող կեցուածք պիտի որդեգրէ:

Մէլուտական նախաձեռնութիւնը մեծ նեցուկ մըն է պաղեստինցիներուն, եւ անիկա է, որ պաղեստինեան հարցը ապահովական ծիրէն դուրս բերելով զայն կը վերածէ քաղաքական հարցի, ընդգծելով քաղաքական ամբողջական լուծումի կարիքը, իսրայէլեան բռնադրաւումին վերջ դնող եւ պաղեստինեան պետութիւն կերտող բանակցութիւններու հիմամբ, ըսաւ ան:

Մուաշար դիտել տուաւ, որ Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոն իրաւունք չունի պայմաններ դնելու, թէ պաղեստինցի ղեկավար Արաֆաթ ինչ կրնայ ըսել եւ ինչ չի կրնար ըսել, եւ կարելի չէ, որ վեհաժողովը դրական նախաձեռնութիւններ քննարկէ Արաֆաթի բացակայութեան:

● ՅՈՐԴԱՆԱՆԻ մէջ արգելափակուած Հրգայալայի երեք անդամներուն մասին հարցումի մը պատասխանելով Մուաշար հաւաստեց, որ քաղաքական ճնշումներու հարց չկայ, Յորդանան կը յարգէ Հրգայալայի դերակատարութիւնը, եւ այդ երեք ձեռքարկուած են որովհետեւ ապօրինի գէնք կը կրէին:

Անհիմն են այն տարածախոսքերը, թէ Յորդանանի թագաւորը որոշած է բացակայիլ ժողովէն եւ որպէս ներկայացուցիչ առաքել Յորդանանի վարչապետը, ըսաւ ան:

Մուաշար հաւաստեց, որ Ապտալա թագաւորը նախաձեռնող իր է բարձրագոյն մակարդակով, անձամբ ներկայանալու ժողովին, որուն նախագահն է եւ ինք ժողովի նախագահութիւնը պիտի յանձնէ Լիբանանի նախագահ զօր. Լահուտի:

Լիպիոյ ղեկավար Մուամմար Քադաֆիէն պատգամ մը նախագահ Լահուտի փոխանցած լիպիացի պատուիրակ Աճմէտ Քադաֆէյ Տամ ոչ մէկ յայտարարութիւն կատարեց Պապատայն մեկնելու պահուն:

Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ ԵԿԵՂԵՑԻ ՇԱԿՈՒՍ

Այսու կը յայտնենք մեր ժողովուրդին, թէ Ուրբաթ, 22 Մարտին, երեկոյան ժամը 6:30ին, Սրբոց Վարդանանց եկեղեցոյ մէջ, հսկումի արարողութեան ընթացքին պիտի քարոզէ՝

ՂՈԳՃ. Տ. ՓԱՌԵՆ ՎՐԴ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

Սիրով կը հրաւիրենք հաւատացեալ ժողովուրդը՝ ներկայ ըլլալու եւ ունկնդրելու օրուան պատգամը:

ԹԱՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայկական Երեսփոխանական Գրասենեակը ամէն օր առաւօտեան ժամը 9:00էն կ'եսորէ ետք ժամը 5:00 կ'ընդունի դիմումներ՝ հետեւեալ ծառայութիւններուն համար:

- 1) Հիւանդանոցային առողջապահական (ուիզարա եւ պետական հիւանդանոցային բուժում):
- 2) Ընկերային Ապահովութե

ՀՐԱԺԵՇՏԻ ԽՕՍՔ՝ ՈՒՂՂՈՒԱԾ ԿՈՐԻՒՆ ԱՐՔ. ՊԱՊԵԱՆԻՆ

Մեծի Տանն Կիլիկիոյ միաբաններէն՝ Կորիւն արք. Պապեան, Սպահանի Հայոց թեմին մատուցած երկար տարիներու բարուք ծառայութեան համար, ընդառաջելով Արամ Ա. կաթողիկոսի հրահրին, 13 Մարտ 2002 թուականին հրաժարուաւ իր թեմի գաւազանէն, վերադարձած է Ամթիլիս:

Սրբազանը շուրջ քառորդ դար երկրի մէջէն դժուարին պայմաններուն մէջ ամբողջական նուիրումով ծառայած է թեմի միջին հարմարին և հարաւային իրանի հայաբնակ կրօնական և ազգային, եկեղեցական ու հոգեւոր կեանքին մէջ, ինչպէս նաեւ՝ կրթական ու մշակութային, բարեպաշտական ու մարդասիրական գործունէութեան բնագաւառներուն մէջ: Ընդ քառորդ դարեայ բեղուն գործունէութեամբ իր անջնջելի կնիքը դրած է թեմի ներկայ ծաղկուն ու կենսունակ վիճակին վրայ:

Նախքան Նոր Ջուղայէն մեկնելը, ան հրաժեշտի այցելութիւններ տուած է Սպահանի նահանգի Ուրբա-

թօրեայ աղօթապետին, նահանգապետին, թեմի շրջաններու հայութեան, միութիւններու ու դպրոցներուն: Անապահած է կրօնական արարողութեանց, հրաժեշտի ու մեծարանքի հանդիսութեանց. ամէն տեղ վայելած է թեմի պետական բարձր շրջանակներու և թեմ ազգային մարմիններու ու հաւատացեալ ժողովուրդի լայն խաւերուն սէրն ու յարգանքը և յուզումնալից ապրումներով ու շուտով կրկին գիրարողջունելու խոստումով բաժնուած է իր այնքա՛մ սիրած թեմի ժողովուրդէն:

Վեհափառի կարգադրութեամբ սրբազանը շուտով պիտի մեկնի նոր թեմ մը՝ շարունակելու համար իր հոգեւոր ու ազգային ծառայութիւնը Հայաստանէն եկեղեցւոյ գաւազանէն:

Ստորեւ լոյս կ'ընծայենք այն հրաժեշտի խօսքը, զոր լաճուն թեմի կրօնական ու թեմական խորհուրդներուն և առհասարակ բոլոր ազգային մարմիններուն՝ արտասանուած է 6 Մարտ 2002ին, Նոր Ջուղայի մէջ, աւելի քան 200 ազգայիններու ներկայութեամբ՝ ի պատի առաջնորդ սրբազանի տրուած ճաշկերտի ընթացքին, թեմի կրօնական խորհուրդի ատենապետ Վրէժ Տէր Մարտիրոսեանի կողմէ:

սուր իշողութիւնում:

Մեծ է նաեւ սրբազան Տօր օտարների հետ յարաբերուելու եւ բարեկամանալու ընդունակութիւնը, լինեն դրանք տեղացիներ կամ օտարացիներ, ամենաբարձր մակարդակներում. եւ ամենուրեք են ջանացել է այդ յարաբերութիւնները օգտագործել ի շահ մեր ժողովուրդի ընդհանրական շահերի եւ մեր համայնքի խնդիրներին լուծումն ուղղութեամբ: Այդ պատճառով սրբազան հայրը այսօր ունի պետական ամենաբարձր օղակներում բազմաթիւ բարեկամներ եւ վայելում է մեծ յարգանք:

Սրբազանի համագործակցութիւնը ազգային մարմինների, միութիւնների եւ հասարակարկի հետ եղել է սերտ եւ անվերապահ: Եթէ նկատի ունենանք նրա երկարամեայ գործունէութեան ժամանակաշրջանը, կ'անդրադառնանք, որ իրականում նա եղել է փորձառու թիւնները և իրաւաւոր փոխանցող փոփոխուող կազմերին եւ չի զլացել այդ գործունէութեան մասնակցելով կամ մտորելից հետեւելով կազմերի աշխատանքներին՝ կուտակած տեղեկութիւններն ու փորձառութիւնները ի սպաս է դրել գործերի բարեշնչող ընթացքին: Հանգամանքի բերումով, գրեթէ քիչ բացառութեամբ, մասնակցել է թեմի բոլոր բարձրագոյն ժողովներին՝ ցուցաբերելով սկզբունքայինութիւն եւ կառուցողական կեցում:

Սրբազանի սեւեռակցութեամբ են եղել եկեղեցին ու զպարտքը: Արդէն գիտենք նրա արտակարգ բծախնդրութիւնը եկեղեցական արարողութիւնների ճշգրիտ կատարման գործում: Եւ ճիշդ ու ջանք չի խնայել Հայոց Առաքելական եկեղեցու պայծառացման համար եւ հետեւողականութեամբ հսկել է Նոր Ջուղայի պատմական եկեղեցիներին, նաեւ թեմիս միւս շրջանների եկեղեցիներին բարեգարգման աշխատանքներին: Այս միջոցով սրբազան Տօր ջանքերով նաեւ երիտասարդութիւնը բաշխող թիւնները զգուշացրելով սկզբունքայինութիւն եւ կառուցողական կեցում:

Սրբազան հայրը առաջին օրից իսկ նպատակադրեց ծանօթանալ թեմի հայ համայնքի, նրա պատմութեան, մշակույթի, սովորութիւններին, նիստ ու կացի հետ, եւ առ այդ յարաբերութիւն ստեղծեց ժողովուրդի ամենալայն խաւերի հետ, թեմի բոլոր շրջաններում. այնպէս որ, ամենակարճ ժամանակում իւրացրեց արեւելահայերէնը, ձեռք բերեց թէ՛ ժողովուրդի սէրն ու համակրանքը եւ թէ՛ անձնական շփումները ի միջոցով լայն ծանօթութիւն ու ճանաչողութիւն՝ մեծաթիւ ընտանիքների եւ անհատների հետ, երկրի տարբեր շրջաններում ամենատարբեր մանրամասնութիւններով, պահուած իր

ԹՈՒՐԻՔԻԱՆ ՌԱԶՄԱԿԱՅԱՆՆԵՐԻ ԵՏԵՂԱԲԱՇԽՈՒՄ ՎՐԱՍՏԱՆԻ ՄԱՄՅԻՏԻ-ԶԱԽԱԽՔ ԵՐԿՐԱՄԱՍՈՒՄ

Մարտի 6ին «Ազգ»ը համացանցի հաղորդագրութիւն էր ստացել, որում գրուած էր: «Թրքական զինուորական մի պատուիրակութիւն Մարտի 7ին ժամանում է Վրաստան, որպէսզի Ախալքալաքում հանդիպի վրացական կառավարութեան ներկայացուցչի հետ: Իրագրեցի ազդիրները յայտնում են, որ այս այցելութիւնը ոգեւորել է Անգարային: Թրքական իշխանութիւնները ցանկանում են Ախալքալաքում՝ Հայաստանի եւ Վրաստանի սահմանադրւիւն թրքական զօրքեր տեղակայել: Թուրքիայի զինուած ուժերի պատուիրակութիւնը պէտք է հանդիպի Սամցխէ-Ջաւախքում Վրաստանի նախագահ լիազօր ներկայացուցչից Թէյմուրազ Մոսիաշվիլիին, Վրաստանի սահմանապահներին, «Ախալքալաք» սահմանային ուղեկալի ներկայացուցչիներին հետ: Ըստ որոշ տեղեկութիւնների, թրքական զօրամիւտորուներ կարող են տեղաբաշխուել Վալէ եւ Նինոծմիխտա քաղաքներում, հիւսիսում՝ Մալկա քաղաքը շրջակայքում, հիւսիսարեւմուտքում՝ Մեթքալի գետի երկայնքով: Թրքական իշխանութիւնները առանձնապէս անհանգստացած են հայ անջատողականների ամբողջաբարական գործողութիւններէրց, երկու շաբաթ առաջ Վրաստանի ազգային անվտանգութեան ծառայութիւններին հասցանք են հնչեցրել, նաեւ նշելով, որ խողովակաշարերի եւ կարս-Թիֆլիս երկաթուղու անվտանգութիւնն ապահովելու նպատակով է պայմանաւորուած թրքական զօրքեր տեղակայելու անհրաժեշտութիւնը»:

Ճրանքերէնով գրուած այս տեղեկութիւնը մենք տպագրում ենք մէկօրեայ ուշացումով: Ընդհանրապէս կարելի էր եւ չըտապել՝ հաշուի առնելով տեղեկութեան մէջ սաղրանքի հնարաւորութիւնը:

Միւս կողմից, Վրաստանի տարածքում թրքական զօրքեր տեղակայելու հաւանականութիւնն այնքան էլ փոքր չէ: Մասնէն լի ուղեկալի օդակայանի տնօրինութիւնը, բոս էութեան, Անգարայի ձեռքբերում է, ապա ինչու բացառել թրքական զօրքերի տեղակայումը Վրաստանում, մասնաւորապէս՝ հարաւային հայաբնակ շրջաններում կամ դրա հարեւանութեամբ: Վրաստանի Թուրքիայի ուսմական, քաղաքական, տնտեսական հովանաւորութեան տղկ դնելու ամերիկեան ցանկութիւնները որեւէ ձեւով չեն հակասում վրաց-թրքական ուղեւորաբարական, ուղեւորական համագործակցութեան ոգուն եւ տառնին: Վերջին հինգ տարիներին Թուրքիան Վրաստանին տրամադրել է մօտ 35 միլիոն տոլար արժողութեամբ ուղեւորական հանգրեւան, Անգարայի տրամադրած ֆինանսական միջոցներով արդիականացուել է Մասնէն լի նախկինում ռուսական ուղեւորական օդակայանը, թուրք գինուորականութիւնն ակնյայտ հետաքրքրութիւն է դրսեւորում ռուսական մէկ այլ նախկին ուղեւորականի՝ Վազիրի նկատմամբ, ցանկութիւն ունեն խաղաղարար առաքելութիւն իրականացնողի դեր ստանձնել վրաց-աբխազական հակասութեան գոտում, վրաց գինուորականները հիմնականում կրթութիւն են ստանում թրքական զինուորական կրթարգոյն հաստատութիւններում, Անգարան կիսապաշտօնական մակարդակով մի քանի անգամ խոտացել է իր ֆինանսական միջոցներով Ջաւախքում բնակուող հայ ազգաբնակչութեան տեղափոխել Ռուսաստանի Սթաւրոփոլի եւ Քրասնոտարի երկրամասեր ու նրանց տներում վերաբնակեցնել ունեւել թուրքերին: Վրացական մի քանի տասնեակ գինուորականներէրց բաղկացած գումարտակը Քրասնոտարում խաղաղարար առաքելութիւն է իրականացնում հնչեց թրքական զօրախմբի կազմում:

Վերադառնալով թրքական պատուիրակութեան այցին: Վրաստանի արտաքին գործոց նախարարութեան սահմանային ծառայութեան մամուլ ծառայութիւնից լրատուամիջոցներին ուղարկուել է հետեւեալ հաղորդագրութիւնը: «Թուրքիայի զինուած ուժերի սպայակոյտի պատուիրակութիւնը 25րդ գնդի հրամանատար, գօր. Թուրքայի Չաքանի գլխաւորութեամբ ետօրեայ այցով ժամանում է Թիֆլիս: Թրքական պատուիրակութեան այցը կրում է ճանաչողական բնույթ: Թուրք գինուորականներն Ուրբաթ օրը կը հանդիպեն վրացական սահմանապահ դերատեսչութեան ղեկավար Վալերի Չխեիձէին, կ'այցելեն Թիֆլիսից ոչ հեռու գտնուող Լիլոյ ռուսական կենտրոն: Թրքական սպայակոյտի պատուիրակութիւնը Մարտի 10ին կ'այցելի «Ախալքալաք» սահմանապահ Ղոկատ, կը հանդիպի Սամցխէ-Ջաւախքում Վրաստանի նախագահի լիազօր Թէյմուրազ Մոսիաշվիլուն»:

Այս տարուան ընթացքում «ճանաչողական» այցերով Վրաստան կը ժամանեն թրքական զինուորական մէկ տասնեակից աւելի պատուիրակութիւններ: Թիֆլիսի իշխանութիւնները բազմիցս պաշտօնական երեւանի իրագրեցի են, որ վրաց-թրքական ուղեւորական համագործակցութիւնն ուղղուած չէ Հայաստանի դէմ, Վրաստանը չի դիմի Հայաստանի անվտանգութեանը սպառնացող որեւէ քայլի: Թիֆլիս - Անգարա ուղեւորական համագործակցութեան ընդլայնումը եւ խորացումը Վրաստանի ինքնիշխան իրաւունք է, սակայն այդ համագործակցութիւնը կարող է բաժանաբար գծեր առաջացնել փխրուն Անդրկովկասում՝ յղի անկասխատեանի հետեւանքներով:

Մասնագիշ է վրացական մամուլի եւ պետական պաշտօնեաների ղեղադրութիւնը, թէ իբր Ախալքալաքում գրուել են բարձրացումը «ազգայնականութիւնը», «անջատողականութիւնը»: Կամ ինչպէս հասկանալ պաշտօնական նախարարութեան ոմն պաշտօնեայի յայտարարութիւնը, թէ ռուսները Ախալքալաքի ճշգրտ ուղեւորականից զննքերը վաճառում են տեղի հայերին:

Ի դէպ, օրերս Վրաստանի անվտանգութեան նախարար Վ. Խապուրժանիան յայտարարեց, թէ Աբխազիայում կարող են գտնուել ահաբեկչական «Քալիտա» կազմակերպութեան անդամներ: Ակնարկը պարզ է. Ճորճ Պուշք երդուել է՝ ահաբեկիչներին, որ տեղ էլ նրանք թաքնուեն, կանգնեցնել արդարադատութեան առաջ: Ի՞նչ տրամաբանութեանը բացառենք, որ պաշտօնական Թիֆլիսը «Քալիտա»ի կամ թախկանի հետք չի փնտռի Ախալքալաքում:

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ ԲԱՅԱՌԻԿ ԲԱՌԱՐԱՆ

Հայաստանի տեղանունների վերաբերեալ բառարանային-նկարագրական առաջին տեղեկութիւնները հաղորդել են հին հեղինակները (Քսենոֆոն, Ստրաբոն, Պտղոմէոս եւ ուրիշներ): Հայ իրականութեան մէջ Մովսէս Խորենացին առաջինն էր, որ իր «Հայոց պատմութիւն» երկում պատմական դէպքերի ու դէմքերի առնչութեամբ փորձել է պարզել բազմաթիւ տեղանունների ծագումը եւ ճշդել տասնեակ տարածքների վայրը:

Հայաստանի տեղանունների մասին պատմական եւ պատմաաշխարհագրական հարուստ նիւթեր է բովանդակում Ղ. Ալիշանի թողած ծովածաւալ ժառանգութիւնը:

Ժամանակակից իմաստով հայկական տեղագրական առաջին բառարանները ստեղծուել են 19րդ դարի վերջերին եւ 20րդ դարի սկզբներին:

Յայտնի են Հ. Հիւլաշյանի («Հիւն հայոց տեղոց անունները», Վիեննա, 1907 թուական), Ն. Ժիւանեանի («Առձեռն բառարան պատմական, աշխարհագրական եւ դիցաբանական յատուկ անունք», Կ. Պոլիս, 1879 թուական), Ս. Եփրեկեանի («Պատկերաբարդ բնաշխարհիկ բառարան», Վիեննա, 1903-1905 թուականներ), Հ. Առաքելեանի («Հանրագիտական բառարան», Թիֆլիս, 1915 թուական), Մ. Պոտուրեանի («Հայ հանրագիտակը», Պուշքէշ, 1938-1940 թուականներ) բառարանները, որոնք հիմնականում մնացել են անաւարտ:

Հայ իրականութեան մէջ Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների լիարժէք բառարան առաջին անգամ լոյս ընծայեց Երեւանի Պետական Համալսարանի հրատարակչութիւնը (1986-2001 թուականներ): Բառարանը բաղկացած է հինգ ստուարածաւալ հատորներից, որոնք բովանդակում են 136 հազար բառաօդուած՝ 700 հրատարակչական մամուլ ձեւաւորվ, տեղափայլերի հարաբար լուսանկարներ, բազում քարտէսներ ու քարտէս-շեմաներ: Այդ բազմաստոր հանրագիտական բառարանի հեղինակներն են Թադեոս Յակոբեանը՝ պատմական գիտութիւնների դոկտոր, փրոֆեսօր, Հայաստանի գիտութեան պատմաաւար գործիչ, Ստեփան Մելիք-Բախշեանը՝ պատմական գիտութիւնների դոկտոր, փրոֆեսօր, Յովհաննէս Բարսեղեանը՝ բանասիրական գիտութիւնների դոկտոր, փրոֆեսօր, Հայաստանի գիտութեան վաստակաւոր գործիչ, Բառարանի առաջին երեք հատորների խմբագիրը Թ. Յակոբեանն է, չորրորդինը՝ Ստ. Մելիք-Բախշեանը, հինգերորդինը՝ Յ. Բարսեղեանը:

Տեղանունների բառարան ստեղծելու գաղափարը հեղինակներին մօտ ծագել է անցեալ դարի 40ական թուականների վերջերին: Սկզբնական շրջանում հեղինակային անձնակազմը բաղկացած է եղել չորս հոգուց: Խմբի մէջ էր նաեւ փրոֆ. սկադեմիկոս Գէորգ Ջալալեանը, որը 50ական թուականների վերջերին հրատարակել է հեղինակակից լինելուց: Հեղինակային եռանդամ անձնակազմը, փրոֆ. Թ. Յակոբեանի ղեկավարութեամբ, աւելի քան չորս տասնամեակի ընթացքում իրականացրեց շատ ծանր ու աշխատակալ մեծ գործ: Չափազանցուլթիւն չի լինի եթէ ասենք, որ այդ համեստ աշխատանքային խումբը կատարեց գիտական սիրանք, որը թրեւս ի գօրու կը լինէր կատարել մի ամբողջ բազմադարձ գիտահետազօտական հաստատութիւն:

Բառարանի հեղինակային անձնակազմը ի մի է հաւաքել ու բառարանագիտական մշակման ենթարկել Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանուններին վերաբերող բոլոր նիւթերը: Իւրաքանչիւր բառաօդուածի անուան դիմաց տրուած են նաեւ ռուսերէն եւ միջազգային տառադարձութիւնները, անուան բոլոր տարբերակները:

Անգերագնահատելի է բառարանի տեսական եւ կիրառական նշանակութիւնը: Հայագիտութիւնից բացի բառարանը կարեւոր նշանակութիւն ունի նաեւ կովկասագիտութեան, բիւզանդագիտութեան, իրանագիտութեան եւ Մերձաւոր Արեւելքի մի քանի երկրների պատմութեան, հնագիտութեան, պատմութեան աշխարհագրութեան, բանասիրութեան եւ այլ գիտութիւնների համար: Բառարանի օգնութեամբ կարելի է ճշդել աշխարհագրական հարկաւոր տարածքների տեղադրութիւնը, դրանց նախկին չաղաւարում անուանումները եւ այլն:

Բառարանը հանրագիտական է ու գործնական ուղեցոյց-ձեռնարկ պատմաբանի, աշխարհագրագէտի, բանասէրի, Հայաստանի տնտեսութեան պատմութեամբ, հնագիտութեամբ ու ճարտարապետութեան պատմութեամբ, հայ ժողովուրդի ազգագրութեամբ զբաղուող մասնագէտների, պետական ու հասարակական համագործակցութեան ղեկավարներին, աշխարհագրագիտական հարկաւոր տարածքների տեղադրութիւնը, դրանց նախկին չաղաւարում անուանումները եւ այլն:

Գտնուելով Արեւելքի եւ Արեւմուտքի շփման շրջաններում, Պատմական Հայաստանը ու նրա յարակից մարզերը բազմիցս դարձել են արևելահեղ պատերազմների թատերաբեմ: Ներքին պատերազմներն ու արտաքին նուաճողները յարատե փոփոխութիւններ են առաջացրել քննարկուող տարածքում բնակուող ցեղերի ու ժողովուրդների կազմը, նրանց ստեղծած վարչակարգերի, նրանց զբաղեցրած տարածքների սահմանների մէջ: Այդ տեսական գործընթացում Հայաստանում եւ նրա կից շրջաններում անընդհատ տեղի են ունեցել անուանափոխումներ, մասամբ էլ աղաւաղումներ եւ դրանց հետեւանքով առաջացել է տեղանունների աւելի քան տասը շերտ:

ԽԱՉԻԿ ՆԱԶԱՐԵԱՆ
Երեւանի Պետական Համալսարանի փրոֆեսօր, աշխարհագրական գիտութիւնների դոկտոր

ՎՐԵՃ ՏԵՐ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ ԱՆՈՒՆԱԿԵՏ ՍՊԱԽԱՆԻ ՀԱՅՈՅ ԹԵՄԻ ԿՐՈՒՍԱԿԱՆ ԽՈՐԻՐԳԻ Ծար-ը՝ էջ 8

Հրամանատար Մանուկ

ՀԱՐԻՐԻ - ՄԻՐՈ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ Կ'ԱՄՐԱՊԵՆԻ ԼԻԲԱՆԱՆ - ՍՈՒՐԻԱ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հրամանատար Մանուկը և Սուրիոյ վարչապետներ Ռաֆիք Հարիրիի և Մուհամմադ Մուսթաֆա Միրոյի հանդիպումը անկիւնադարձային իրադարձութիւն մըն էր զանազան մակարդակներու վրայ երկու երկիրներուն միջեւ համագործակցութեան հասած զարգացման շրջագիծին մէջ: Երկու վարչապետներուն ստորագրած համաձայնագիրները եկան իրենց արդիւնք Սուրիոյ նախագահ Պաշաթ Կասաբի Լիբանան այցելութեան, եւ այս այցելութեան դրական անդրադարձին՝ զանազան մակարդակներու վրայ, մանաւանդ որ նախագահ Կասաբի այցելութիւնը, վարչապետ Ռաֆիք Հարիրիի կարծիքով, պատմական այցելութիւն մըն էր բառին ամբողջական իմաստով:



Հարժուած մը, որուն իրենց արդիւնք մէջտեղ եկած են ռազմաթիւ դրական երեւոյթներ՝ քաղաքական եւ տնտեսական մակարդակներու վրայ: Ասոնցմէ կարելի է յիշել վարչապետ Ռաֆիք Հարիրիի շարժումը, որ կը միտի Լիբանանի դիրքերը ամրացնել յառաջիկայ մարտահրաւէրները դիմագրաւելու ուղղութեամբ: Միւս կողմէ, կը շարունակուի կառավարութեան ձեռնարկած բարեկարգումներու գործընթացը:

Կառավարական աղբիւրներ կ'ըսեն, որ Միրոյի եւ անոր ընկերակցող պատուիրակութեան այցելութիւնը զուգահեռ պէտք է բաւական բարձր իրադարձութիւններով լեցուն ժամանակաշրջանի մը, ինչ որ կ'ենթադրէ այս յարաբերութիւններուն ամրապնդումը: Այս մէկը տեղի ունեցաւ վարչապետարանին մէջ՝ երկու վարչապետներուն միջեւ հանդիպման ընթացքին: Այս առիթով թեմաքննարկուած էր նախքան հանդիպումը տեղի ունեցած հեռաձայնային հաղորդակցութիւններուն ամրապնդումը:

Կառավարական աղբիւրներ կ'աւելցնեն, որ Պէյրութի եւ Դամասկոսի միջեւ յարաբերութիւններու զարգացման գունդահո, կայ նաեւ ներքին

կիրք վերակառուցուեցաւ զերոյն՝ աւերիչ պատերազմէ մը ետք:

Կառավարական աղբիւրներ կ'անդրադառնան զանազան ուղղութիւններով տարուող այն դիւանդադրական շարժումին, որ կը միտի հետեւի արաբական վեհաժողովի կայացման ընթացքին եւ շրջանի իրադարձութիւններուն: Այս առիթով թեմաքննարկուած էր նախագահ Կասաբիի կառավարութեան ձեռնարկած բարեկարգումներու գործընթացը:

Ասոր արդիւնքներէն մէկն է Ֆրանսայի արտաքին գործոց նախարար Իւպէր Վետրինի շտապ նամակը արտաքին գործոց նախարար Մահմուտ Համմուտին, նամակ մը, որ կը ըզմանդակէ Լիբանանի նկատմամբ Ֆրանսական զօրակցութեան եւ արաբական վեհաժողովի յաջողութեան նկատմամբ յանձնառուութիւն, մինչ Ուաշինգթոն լրջօրէն կը հետեւի վեհաժողովի աշխատանքներուն:

Մասնաւորապէս զօրակցութեան եւ արաբական վեհաժողովի յաջողութեան նկատմամբ յանձնառուութիւն, մինչ Ուաշինգթոն լրջօրէն կը հետեւի վեհաժողովի աշխատանքներուն:

ՌԵՎԻՍՏ ԱՐԻՏԻ

«Տիար»

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՄԱՐԶԻ ՏԱԳՆԱՊ

Հիւանդանոցները կը տազնապին նիւթական դժուար կացութեան. կացութիւն մը, որ կարգի չէ զանոնք սարքաւորումներու եւ առողջապահական պիտոյքներուն ծախսերը գոցելէ: Ասոր համար այ հիւանդանոցներուն պիտոյքները անկարող կ'ըլլան այս կուտակուող տագնապները դիմագրաւելէ, մանաւանդ որ ապահովագրութեան ընկերութիւններուն եւ առողջապահական սարքաւորումներու եւ պիտոյքներու վաճառականներուն ունեցած պարտքերը օրէ օր կը կուտակուին: Այս կը հաստատեն Հիւանդանոցներուն պատասխանատուները:

Լիբանանի հիւանդանոցներու սենտրալի նախագահ տեղաւոր Զառա Էտայմի ակնարկեց այն դժուարութիւններուն, զորս կը դիմագրաւէ առողջապահութեան մարզը՝ քաղաքացիներուն աւելի լաւ ծառայութիւն մը ապահովելու ուղղութեամբ: Ան նկատելի տուաւ, թէ ոչ միայն այս մարզի պատասխանատուները, այլ բոլորը պատասխանատու են

այս մարզի գործունէութեան շարունակականութեան համար, որովհետեւ ասիկա ընկերային ապահովութեան հիմնական խորհրդներէն մէկն է, միեւնոյն ժամանակ, ան կը ներկայացնէ տնտեսութիւնը խթանող ուժ մը, որ կարելի չէ անստեղծել:

Ան աւելցուց. «Լիբանանի առողջապահական մարզը կ'ընդգրկէ 144 կարճ եւ միջին կեցութեան հաստատութիւններ՝ 10,137 անկողինով: Կայ նաեւ 17 կարգաւորութեան հաստատութիւններ, որոնք շրջաններուն մէջ, եւ իւրաքանչիւր անկողինի միջին ծախսը 150 հազար տոլար է, որ այս մարզին մէջ ներդրումներու ընդհանուր գումարը 1,5 միլիարդ տոլարէն աւելի կը դարձնէ՝ աշխատանք ապահովելով մօտաւորապէս 5000 բժիշկի եւ 25 հազար անձի»:

Յ. Էտայմի ըսաւ. «Այս բոլոր իրականութիւններուն դիմաց եթէ պատասխանատուները վերատեսութեան չեն-

թարկեն իրենց տեսակէտները առողջապահական մարզին վնաս հասցնող որոշումներուն ապահովութեան հիմնական պիտոյքները ստիպուած պիտի ըլլան տալու արտակարգ որոշումներ ինչ կը վերաբերի գործէ ազատ կացութեան կամ ծախսալից բաժանմունքներու փակման կամ գիւնդերու բարձրացման, որ պէտք է կարենան շարունակել ծառայութիւններու մատուցումը պէտք եղած մակարդակով»:

Առողջապահական սարքաւորումներու գիւնդ չվճարելու մասին ան ըսաւ. «Վաճառականները սկիզբէն այլ հասկացութիւններու ցուցաբերեցին հիւանդանոցներու իրավիճակին նկատմամբ, սակայն պարտքերը աւելցան, որ պատճառ դարձաւ, որ անոնք աւելի խիստ կեցուածք որդեգրեն սարքաւորումները չյանձնելու ուղղութեամբ, բացի եթէ անոնք գինը կանխիկ վճարուի»:

ՄԱՐՏ 19 2002

«Անուար»

Ծար-ը՝ էջ 10

ԱՆՆԱԽՆԹԱՅ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԱՆՆԱԽԱԴԵՊ ՎԵՆԱԺՈՂՈՎԻ ԸԱՄԱՐ

ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ԳԼԽԱՒՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ՝ ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ ԵՒ ՓՐՈՅՈՒՔՈՒ

27 - 28 Մարտին Լիբանանի մէջ կայանալիք արաբական վեհաժողովը կարեւոր է Լիբանանի թէ՛ ապահովական, թէ՛ զբօսաշրջական եւ թէ՛ մանաւանդ քաղաքական մակարդակներուն վրայ: Զանազան երկիրներու դեսպաններ կառավարութեան կը դիմեն վեհաժողովին առնչուող ապահովական եւ փրոթոքոլային աշխատանքներուն մասին տեղեկութիւններ ունենալու համար: Պետութիւնը, համապատասխան կազմերով, աշխատանքի լծուած է արաբական վեհաժողովի մասնակցող թաղաւորներուն եւ նախագահներուն ապահովական, առողջապահական եւ փրոթոքոլային բոլոր անհրաժեշտ պայմանները ամբողջացնելու համար:

Ապահովութիւնը վեհաժողովի ամէնէն կարեւոր տուեալն է, այդ պատճառով յառաջացած է յատուկ կառուց մը, որ կը գործէ ճշգրիտ եւ նրբօրէն սերտուած ծրագրի մը հիման վրայ: Այս ծրագրին կիրարկման իրենց մասնակցութիւնը պիտի բերեն շուրջ 8 հազար զինուորականներ, նախագահական պահակազույգի լրիւ կազմը, ներքին ապահովութեան ուժերը, ընդհանուր եւ պետական ապահովութեան ուժերը, Լիբանանի Կարմիր Նաշն ու հրէջնները, քաղաքացիական պաշտպանութեան անդամները: Այս բոլոր կառուցները իրենց գործողութիւններուն ընթացքին ենթակայ են նախագահական պահակազույգի հրամանատար գնդ. Մուսթաֆա Համմուտին: Ապահովական գործընթացը տեղույն վրայ, պարագաներու բերումով պիտի չկատարուի: Անոր պատրաստութիւնն ու ծրագրումը սկսած է 11 ամիս առաջ, երբ Ամմանի մէջ կայացած վեհաժողովը վերջ գտաւ: Այդ շրջանին Լիբանանի նախագահական պահակազույգը կապի մէջ էր Եգիպտոսի եւ Ամմանի նախագահական պահակազույգին հետ եւ գիտցաւ ապահովութեան կիրարկման գործընթացը: Ինչպէս նաեւ Ֆրանսախօս երկիրներու վեհաժողովին համար եղած պատրաստութիւններն ու արաբական վեհաժողովին գործընթացը իրարու զուգահեռ պէտք է:

Վեհաժողովին համար Լիբանան եկող նախագահներուն, իրենց ընտանիքներուն եւ պատուիրակութեան անձնակազմի եւ կառավարական ապահովութիւնը նկատի առնուած է:

Նախագահական պահակազույգի պատասխանատուն նկատի առած է երեք զխաւոր կէտեր վեհաժողովի ապահով եւ յաջող կայացման համար:

Առաջինը՝ ներքին եւ արտաքին մարզերու տեղեկութիւններու ապահովում, գործակցութեամբ պետական ապահովութեան ուժերուն: Այս պարագան կարեւոր է տարբեր շրջաններու մէջ կատարուած իրադարձութիւններէն տեղեկ ըլլալու եւ անախտօղէպքերու կամ արկածներու առաջը առնելու համար:

Երկրորդ կէտը ղէպքի մը պարագային ճիշդ ձեւով հակազդելու պատրաստութեանն է: Այս ծիրին




մէջ զինուորներն ու համապատասխան մարմինները այնպիսի ձեւով մը պատրաստուած պէտք է ըլլան, որ գիտնան ինչպէս հակազդեն, երբ գտնուին կատարուած իրողութեան առջեւ եւ պէտք եղած միջոցառումներուն դիման պատահածին ազդեցութիւնը մեղմացնելու կամ անոր առաջը առնելու համար:

Երրորդ կէտին մէջ ընդգրկուած է ղէպքին հետեւանքները մեղմացնելը, վիրաւորները հիւանդանոց փոխադրելը եւ պէտք եղած խնամքն ու առողջապահութիւնը ապահովելը: Ասոր կողքին կ'աւելնայ նաեւ փրոթոքոլի բաժինը եւ տեղեկատուութեան անհրաժեշտ տուեալներու ապահովումը:

Ասկէ մեկնած՝ աշխատանքները յատուկ ձեւով բաժնուեցան եւ իւրաքանչիւր բաժնին համար նշանակուեցաւ պատասխանատու մը, որ մօտէն պիտի հետեւի ապահովական, առողջապահական եւ փրոթոքոլային պայմաններու ապահովման աշխատանքներուն:

Ապահովական բաժնին մէջ կան շարք մը սպաներ, որոնք կը հսկեն կատարուած աշխատանքներուն: Կայ խումբ մը, որ փոխադրութիւնը եւ ճամբաներու ապահովութիւնը ստանձնած է, այլ խումբ մը օդակայանի ապահովութիւնը, որի մը՝ պանդոկի, սրահի, սենեակներու եւ անոր շրջակայքի ապահովութիւնը:

Առողջապահութեան մարզին մէջ Լիբանան օժտուեցաւ կարգ մը անհրաժեշտ կազմաւորումներով, որոնք պիտի օգտագործուին, եթէ վեհաժողովի մասնակցող-



ներէն մէկը առողջապահական հարցեր դիմագրաւէ: Նախագահական պահակազույգը այս մարզին մէջ կը գործակցի Պէյրութի Ամերիկեան Համալսարանի Հիւանդանոցին, Լիբանանի Կարմիր Նաշին, տեղական կամ օտար շարք մը հիւանդանոցներու հետ: Այս հիւանդանոցներն ու Օգնութեան Նաշի անդամները միշտ պիտի գտնուին պատրաստ վիճակի մէջ, որեւէ պարագայի շուտով օգնութեան հասնելու եւ անհրաժեշտ քայլերը առնելու համար: Այս աշխատանքին համար պատրաստուած են շուրջ 100 հիւանդատար ինքնաշարժներ, 85 հիւանդապահներ, յատուկ նաւեր եւ օդանաւեր:

Ապահովուած են նաեւ կարգ մը հիւանդանոցներ, իրենց լրիւ կազմաւորումով, բաժանմունքներով եւ բժիշկներով, որոնք որեւէ պարագայի եւ որեւէ ժամու պիտի գտնուին վեհաժողովի մասնակցներուն սպասարկելու պատրաստ վիճակի մէջ: Ասոնց կողքին կան նաեւ զեղարաններ, տարրալուծարաններ, յատուկ հիւանդատար ինքնաշարժներ, որոնք օժտուած են հիւանդանոցային առաջնակարգ սարքերով, եւ այլն: Ապահովուած են նաեւ ծովային, ցամաքային եւ օդային ճամբաներով անհրաժեշտ ծառայութիւն մատուցելու նաւերը, ինքնաշարժներն ու օդանաւերը:

Պանդոկին մէջ պիտի ըլլան նաեւ բժիշկներ, շտապ օգնութեան եւ պարզ հիւանդութիւններու բուժման յատուկ սարքեր՝ անհրաժեշտութեան պարագային վեհաժողովի մասնակցներուն ծառայելու համար:

Առողջապահական մարզին մէջ նկատի առնուած են տարբեր տեսակի պարզ եւ արտակարգ հիւանդութիւններու պարագաներ, պայթումներու, հրդեհներու, ալրուածքներու եւ այլ արկածներու պարագաներ:

Փրոթոքոլի մարզին մէջ մեծ աշխատանք կը տարւի՝ նկատի ունենալով, որ վեհաժողովի մասնակցները թագաւորներն են նախագահներն են: Այս աշխատանքին համար եւս յառաջացած է յատուկ յանձնախումբ մը, որ պիտի գործադրէ յատուկ ծրագրի մը: Այս մարզին մէջ յանձնախումբը կը գործակցի ապահովական ուժերուն հետ: Փրոթոքոլի առաջին մասով պաշտօնական հրաւէրներ ուղարկուեցան արաբական վեհաժողովին մասնակց բոլոր երկիրներու նախագահներուն կամ թագաւորներուն: Ատկէ ետք կը սպասուի հրաւիրեալներուն պատասխաններուն եւ նամակներուն:

Փրոթոքոլի երկրորդ բաժինը օդակայանին մէջ է, ուր պիտի կազմակերպուի հիւրերու ընդունելութիւնը: Օդակայանին մէջ ներկայ պիտի ըլլան նախագահ Լահուտ եւ այլ պաշտօնական անձնաւորութիւններ, որոնք, ըստ փրոթոքոլի օրէնքներուն, պիտի ընդունին վեհաժողովին մասնակցողները:

Անկէ ետք կայ ժամադրութիւններու դասաւորումը նախագահ Լահուտի եւ միւս նախագահներուն եւ թագաւորներուն միջեւ:

Յանձնախումբը նաեւ կը հետեւի նախագահ Լահուտի գործողութիւններուն, թէ՛ պայատին եւ թէ՛ վեհաժողովի կայացման պանդոկի սրահին մէջ, պաշտօնական ընթրիքի եւ ժամադրութիւններու ընթացքին: Յանձնախումբին գործերէն է նաեւ ճաշացուցակի, ճաշի ներկայացման ձեւի, սեղաններու եւ հիւրերու նստելիք տեղերու դասաւորման աշխատանքներուն հսկողութիւնը: Այս նպատակով յատուկ թղթիկ պատրաստուած է եւ գծուած է ենթակային նստելիք սեղանն ու աթոռը, եւ կը նախատեսուի, որ ընթրիքին հիւրերը իրենց տեղերը տեղաւորուին հինգ վայրկեանի մէջ:

Յանձնախումբը նաեւ կը ստանձնէ պանդոկին մէջ եղած սենեակներու դասաւորումը, վեհաժողովին մասնակցող անձերու փոխադրութեան կազմակերպումը եւ ինքնաշարժներու դասաւորումը:

ՄԱՐՏԻ ԽԱՆԻՖԷ

«Նահար»

(Յապաւուած)

«ԱԶԳԱԿ»
ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ
«ԱԶԳԱԿ»-ի հետ կապուելու համար հեռաձայնել
հետեւեալ թիւերով: -258526, 260115 եւ 241274:

Կոնցական

ՄԵՐ ԶԱՒԱԿՆԵՐԸ ԵՒ ՄԵՆՔ

ԵՐԲ 5 ՏԱՐԵԿԱՆ ՄԱՆՉՈՒԿԸ 3ԱՃԱԽ ԿԸ ՄՏԷ

5 տարեկան մանչուկը ստախոս չէ: Ան կամովին իրականությունը չի ծածկեր, պարզապես անտակալին շատ լաւ չի գնահատում: Իրականը երեւակայական է: Իրեն համարում է բան իրական է, փաստը այն է, որ տակալին կը հաւատայ կաղանդ Պապային կամ հրեշտակին: Միւս կողմէ, անոր երեւակայությունն ալ չափազանց հարուստ կ'ըլլայ, ոչինչ բան մը ան կրնայ պատմութիւն մը հնարել եւ դառնալ անոր հերոսը:



ԿՈՒՋԷ ՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ ԳՐԱՒԵԼ

4 տարեկանին պատկը մը արդէն բաւական լաւ կը տիրապետէ իր լեզուին: Ան գիտէ, որ բառերու շնորհիւ կրնայ տպաւորել կամ ազդեցութիւն գործել: Այսպէս, ան կրնայ որեւէ բան պատմել ընկերները զարմացնելու եւ անոնց հիացումին արժանանալու համար, առանց մտածելու, թէ իր ըրածը սխալ է: Այսպէս, ան կրնայ պատմել, թէ շարժապատկերի այսինչ հերոսը իր հորեղբայրն է կամ այնինչ ղղեակը իրենց ընտանիքին կը պատկանի: Երբեմն ալ փոքրիկը կը ստէ նեղ կացութեան մը դուրս գալու համար: Օրինակ, ան մեծ պաղարիւնութեամբ կրնայ պատմել, թէ ինչպէս արտերկրացի մը եկած եւ կերած է սառնարանին մէջ ըլլալու կարկանդակները... Ան նախապէս մտքին մէջ պատրաստած է այս սեմարիոն, եւ երբ կը հարցապնդուի, անմիջապէս դուրս կը հանէ զայն եւ մինչեւ իսկ ինք կը հաւատայ իր պատմածին:

ՕԳՆԵԼ, ՈՐՊԵՍՁԻ ԿԱՄԱՅ - ԿԱՄԱՅ ԻՐԱՎԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԳՈՒՆՉՅՈՒՆ

Ընդհանրապէս սուտերու շարանը վերջ կը գտնէ կամ առնուազն կը սկսի նուազելու 6-7 տարեկանէն սկսեալ: Այս տարիքին երեխան կը սկսի գանազանել երեւակայական իրականէն: Այսուհանդերձ, փոքրիկները շատ բան կը հնարեն ու կը պատմեն. պէտք է որ կամայ - կամայ գիրենք իրականութեան վերադարձնենք: Նախ պէտք է հասկնանք, որ մենք միամիտ չենք եւ իրենց պատմածները միշտ ալ ընդունելի չեն: Այսպէս, երբ ան ըսէ՝ «Ես Սասունցի Դաւիթն եմ եւ ըստ իմ շարերը պիտի սպաննեմ», պէտք է սրբազրեմք՝ բաւով: «Իրեւ թէ դուն Սասունցի Դաւիթն ես եւ պիտի սպաննես շարերը»: Եթէ պատմէ, որ հոյսամոզէ մը կոտորած է իր խաղալիքը, ըսենք. «Որքան որ իմացած եմ, շատ երկար տարիներ է ի վեր հոյսամոզէները անհետացած են աշխարհին երեսէն...»: Այսպէս, առանց յանդիմանելու կամ ողբերգութեան վերածելու, անոր լարած թակարդին մէջ չիւնանք եւ փորձենք կամայ - կամայ գինք դէպի իրականութիւն բերել:

ԱՅԼԱԶԱՆ

ԶՈՒՐԻ ՍՊԱՌՈՒՄԸ

- Պարզ լողանքի մը ընթացքին 160 լիթր ջուր կը սպառի, մինչդեռ տուշով լողանքը կը սպառէ միմիայն 70 լիթր:
- Խանգարուած ծորակ մը կրնայ օրուան ընթացքին 80 լիթր ջուր կորսնցնել:
- Խանգարուած «սիֆոն» մը օրական 500 լիթր ջուր կրնայ կորսնցնել, տարեկան՝ շուրջ 183,000 լիթր...:
- Պնակ լուացող մեքենան կը սպառէ 40 լիթր ջուր, մինչդեռ ձեռքով լուալու պարագային կը սպառի միայն 20 լիթր ջուր:

«ՊԵՆԵԹՈՆ»Ը՝ ԿՈՅՐԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Իտալական «ՊԵՆԵՐՈՆ» Ընկերութիւնը հրապարակ իջեցուցած է գունաւոր թի - շԵՐՔՆԵՐ, յատուկ՝ կոյրերու համար: Արդարեւ, անցեալ Յունուար 4ին ոգեկոչուած «Կոյրերու Միջազգային Օր»ու անիթով շուկայ իջած այս թի - շԵՐՔՆԵՐը ունին յատուկ հիւստածք, որ կոյրի մը կողմէ շօշափելու պարագային ի յայտ կու գայ թի - շԵՐՔՆԵՐ գոյնը:

www.lemagan.com

ՓՈՐՁ - ԸՆԴՅԱՐԱՆ

ԵՆԹԱՐԿՈՒՈ՞Ղ, ԹԷ ՏԻՐՈՂ ԱՆՉ ՄԵՆ ԷՔ

- 1 -

● Ամբարն արձակուրդը կը ծրագրէ՞ք՝
 Ա.- Դուրս արդէն իսկ որոշած եւ ծրագրած էք:
 Բ.- Կը սպասէք, որ ընտանիքին անդամները առաջարկ կատարեն:
 Գ.- Կը հրաժարիք ձեր ծրագրէն՝ ընդհանուրին փափաքին վրայ:

- 2 -

● Հանրախանութի մը մէջ էք՝
 Ա.- Դուրս ձեզի համար սուղ անուշահոտ մը կը գնէք:
 Բ.- Խոհանոցի սեղանին նոր ծածկոց մը կը դնէք:
 Գ.- Կաղապար մը կարկանդակ կը գնէք ամբողջ ընտանիքին համար:

- 3 -

● Ձեր մանկութեան նախասիրած խաղն է՞ր՝
 Ա.- «Օրիորդ-օրիորդը»:
 Բ.- Պահմոցը:
 Գ.- «Բժիշկ-բժիշկ»:

- 4 -

● Եթէ կառավարութեան մէջ նախարարութիւն մը պիտի ստանձնէք, կ'ընտրէք՝
 Ա.- Կրթականը:
 Բ.- Մարզականը:
 Գ.- Ներքին գործոցը:

- 5 -

● Պիտի ուզէիք, որ ձեր սիրելին ձեր ձեռքը խնդրէ՞
 Ա.- Ծնկաչոք:
 Բ.- Ձեր ծնողքէն:
 Գ.- Անսպասելիօրէն, խօսակցութեան մը ընթացքին:

- 6 -

● Այլ մարդու մը մօտ չէք սիրեր:
 Ա.- Երեւակայութեան պակասը:

- 7 -

● Եթէ ժապաւէնի մը հերոսուհին պիտի դառնաք, կ'ընտրէք՝
 Ա.- Որքէ դերը:
 Բ.- Արկածախնդիր կնոջ դերը:
 Գ.- Թագուհի դերը:

- 8 -

● Պաշտօնակից մը կոշտ կը վարուի ձեզի հետ՝
 Ա.- Նոյն ձեռքով կը հակադրէք:
 Բ.- Կու լաք:
 Գ.- Տարբեր ձեռքով վրէժ կը լուծէք:

- 9 -

● Նստասենեակին մէջ՝
 Ա.- Ունիք ձեր մնացուց տեղը՝ հանգստակէտ բազմաթիւ մը:
 Բ.- Մնացուց տեղ չունիք, կը նստիք հոն, ուր պարագ է:
 Գ.- Կը նստիք միշտ գետնին, բազմոցի մը վրայ:

- 10 -

● Երբ խաղի մը ընթացքին պարտուիք՝
 Ա.- Խաղը կէս կը ձգէք ու կը քաշուիք:
 Բ.- Կը շարունակէք խաղը:
 Գ.- Խաղը կէս կը ձգէք ու կը քաշուիք:

- 11 -

● Եթէ մարդկային մարմնի գործարան մը ըլլալիք, կ'ընտրէիք՝
 Ա.- Սիրտը:
 Բ.- Ականջը:
 Գ.- Թոքերը:

- 12 -

● Ձեր մեծագոյն թերութիւնն է՝
 Ա.- Գոռոզութիւնը:
 Բ.- Յամառութիւնը:
 Գ.- Քմահանութիւնը:

- 13 -

● Երբ սխալ մը գործէք՝
 Ա.- Կ'ընդունիք եւ ներողութիւն կը խնդրէք:
 Բ.- Կը յամարիք չղիջիլ:
 Գ.- Ամէն ձեռքով կը փորձէք դուրս ձեզ արդարացնել:

- 14 -

● Ժողովներու ընթացքին՝
 Ա.- Յաճախ խօսք կ'առնէք եւ կը հակաճանաչէք:
 Բ.- Լուռ կը լսէք եւ կարծիք չէք յայտնի:
 Գ.- Հազուադէպօրէն կը միջամտէք:

- 15 -

● Ձեր նախասիրած անձնաւորութիւնն է՝
 Բ.- Լուի 14րդը:
 Գ.- Անգլիոյ Չարլզ Ի- խանը:

ԱՐԴԻՆՔ

● Եթէ 22 կէտէն պահած

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
Ա	3	2	2	2	3	2	1	2	3	2	3	1	2	2	3
Բ	2	3	1	3	1	1	3	1	1	1	2	1	3	2	2
Գ	1	1	3	1	2	3	2	3	2	3	2	3	1	1	1

Բ.- Կը շարունակէք խաղը:
 Գ.- Խաղը կէս կը ձգէք ու կը քաշուիք:
 Բ.- Կը շարունակէք խաղը:
 Գ.- Խաղը կէս կը ձգէք ու կը քաշուիք:
 Բ.- Կը շարունակէք խաղը:
 Գ.- Խաղը կէս կը ձգէք ու կը քաշուիք:

ԸՆԿԵՐԱՅԻՆ

ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ԶԱՅՆԸ

Ընդհանրապէս չենք մտածեր եւ ոչ ալ կը հետաքրքրուինք, թէ մեր ձայնը ինչ ազդեցութիւն կը գործէ ուրիշներուն վրայ: Պէտք է ըսել, թէ շատ քիչ անգամ մենք մեր ձայնը մտիկ կ'ընենք... Մինչդեռ, շատ մը ուսումնասիրութիւններու համաձայն, մեր ձայնը մեր յաջողութեան գլխաւոր տրեւանքներէն մէկն է: Նոր կատարուած վիճակագրութեան մը համաձայն, գործատէրերուն 75 առ հարիւրը կը խոստովանի, որ մեծապէս կ'ազդուին իրենց խօսակցի մայրնէն, եւ եթէ նոյն առաւելութիւնները ունեցող 2 թեկնածուներ գործի դիմեն, կ'ընտրեն ան, որուն ձայնը աւելի հաճելի է: Այլ ուսումնասիրութիւններ փաստած են, որ խօսակցութեան պահուած ձայնին ձգած տպաւորութիւնը նոյնքան կարեւոր է, որքան՝ խօսակցութեան բովանդակութիւնը:

ՀԱՃԵԼԻ ԵՒ ՀՄՈՋԻՉ ԽՕՍԱԿԻՑ ԸԼԼԱՆՈՒ ՊԱՐՁ ՀՆԱՐՆԵՐ

- Կ'ուզէ՞ք նոր յարաբերութիւններ մշակել, ժպտեցէք խօսելու ժամանակ:
 Ձայնասփիւռ շատ մը խօսակցներ կը ժպտին խօսելու ժամանակ, հակառակ որ ունենալը չի տեսնել այլ ժպտել, բայց խօսակցին ձայնը տարբեր երանգ կը ստանայ եւ աւելի համակրելի կը դարձնէ զինք:
- Կ'ուզէ՞ք, որ ձեր խօսակցը ձեր տեսակետը որդեգրէ, խօսեցէք ձեր ձեռքերով:
 Ձեռքի շարժումներով խօսակցութիւնը աւելի համոզիչ կը դարձնէ եւ ձեր ենթագիտակցութեան միջոցով ձեզ կը մղէ, որ աւելի խանդավառ խօսիք:
- Կ'ուզէ՞ք հաճախ երեւիլ, երբ ուրիշներու ներկայութեան կը խօսիք, շնչեցէք ձեր փորէն, փորին մկանները ուռեցնելով եւ պրկելով:
 Շնչառութեան այս ձեւը կ'օգնէ, որ ձեր ձայնը չղուզայ եւ ձեր կոկորդի մկանները չարկուին: Այսպէսով դուրս կ'երեւիք աւելի հանդարտ, իսկ ձեր ձայնը՝ աւելի տպաւորիչ:

ԾԱՂԿԱԶԱՐԴ

Մեծ պահքի վերջին Կիրակին Մաղկազարդ կը կոչուի: Մաղկազարդ Քրիստոսի հանդիսաւոր մուտքն է Երուսաղեմ: Ժողովուրդը խնդավառ ընդունելութիւն ցոյց կու տայ Յիսուսի՝ ձիաբեցիի եւ արմաւենիի ճիւղերով դիմաւորելով զայն: Անոնք նոյնիսկ իրենց հագուստները կը փռեն գետին, որպէսզի Յիսուս անոնց վրայէն անցնի: Երբ Յիսուս տանար կը մտնէ, կը տեսնէ, որ շուկայի վերածուած է ան, անմիջապէս կը մաքրէ տանարը ու բոլորից կը հասկցնէ, որ տանարը միայն աղօթքի համար կը գործածուի: Մաղկազարդի Մաքր երկոյնեան, ժամերգութեան ընթացքին կը բացուի քառասուն օր փակ մնացած խորանը: Մաղկազարդի օրը, Անգուստինի ժամանակ կ'օրհնուին ձիաբեցիի ճիւղերը եւ հաւատացեալները ձիաբեցիի օրհնուած ոստերը տուն կը տանին: Հին ատեն Մաղկազարդի օրը տօնակատարութեան զանազան սովորութիւններ կային: Բայց ներկայիս բոլոր եկեղեցիներուն մէջ կը կատարուի միայն հանդիսաւոր թափօր: Մաղկազարդի օրը զգեստներ հագած, զարդարուած մոմ բոցած, իրենց ծնողներուն ընկերակցութեամբ եկեղեցի կու գան ու կը մասնակցին թափօրին: Անցեալին, Մաղկազարդի օրը եկեղեցին կը զարդարուէր ուռնիի, ձիաբեցիի կամ արմաւենիի ճիւղերով: Սովորութիւն էր նաեւ եկեղեցիին մէջ ծառ զարդարելը, տղայ եւ աղջիկ նշանելը, նշանուած աղջկան գունաւոր գոգնոց կամ զգեստ նուիրելը: Նորահարսերուն ազատութիւն կը տրուէր ծնողներուն մօտ երթալու եւ մնալու: Նոյն օրը պատահիները Յօնորան (Յօնանակ) կը խաղային եւ շրջելով՝ տուններէն հաւկիթ կը հաւաքէին:

ԽՈՒՍԿԻՐ

ՇՈՄԻՆՈՎ ԿԵՐԱԿՈՒՐ



- Պատրաստութեան համար անհրաժեշտ են.-
- 500 կրամ թարմ շոմի
 - Պճեղ մը սխտոր
 - Մէկ թէյի գաւաթ խաշած սիսեռ
 - 5 միլիակ լոլիկ
 - 4 մեխակի գամ
 - 2 խոշոր սոխ
 - 2 ապուրի դգալ ձէթ
 - 2 թէյի դգալ քղպարա
 - 1 թէյի դգալ կարմիր փոշի պղպեղ

Պատրաստութիւն.-
 Կաթնայի մը մէջ, թեթեւ կրակի վրայ տաք ձէթին մէջ դարձնել ճգմուած սխտորը, աւելցնել շոմիներ, սիսեռը, օղակաձեւ կտրտուած սոխը, մանրուած լոլիկը, ծեծուած մեխակի գամը, քղպարան, կարմիր փոշի պղպեղ եւ աղը:
 Անգամ մը խառնել, 10 սանթիլիթր ջուր աւելցնել եւ 10 վայրկեան եփել:
 Կրակին վրայէն հանել, քիչ մը ճգմել կամ միքսըրէ անցընել եւ երեսը սիսեռով զարդարել:
 Հրամցնել գետնախնձորի խիւսի կամ բրինձի կողքին:

Պատրաստեց՝ ՇՈՒԵԿ ՄԱԻՍԱԳԱԼԵԱՆ

ՏԱՐԵԿԱՐՁԻ ԼԱՒԱԳՈՅՆ ՆՈՒԷՐ

VIDEO ԿԱՄ ՇՈՒ ՎՐԱՅ
 VIDEO ՇՐՈՒՆԵՐ
 ԱՆՁԻՆ ԱՆՈՒՆՈՎ ԵՒ ՄԱԿԱՆՈՒՆՈՎ

Դիմել՝ ԱՐԱ ԲԷԲԵՃԵԱՆ ՎԱՍ.
 Շեռ. 01 / 261696, 03 / 250518

ԾԱՆՈՒՑՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

«Ազգայն» մէջ ազգային կամ առնչական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթերցելի գիրով (հաստատութեանց պարագային՝ անխնդրաբար պաշտօնակալ թուղթի վրայ, եւ՝ հաստատուած) ներկայացնել «Ազգայն» ծանուցումներու գրասենյակը:

ԿՈՒՉՈՒԻ

● Տան մը համար գանազոն աշխատանքներ կատարող տիկին մը, շաբաթական երկու օրուան համար: Դիմել՝ հեռ. 03-585214:

